# Հաշվետվություն

## ՀՀ Տավուշի մարզպետ Հ. Զոբանյանի գլխավորած պատվիրակության՝ Լիբանանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Հայկ Զոբանյան - ՀՀ Տավուշի մարզպետ

Մայիսի 06-10, Լիբանանի Հանրապետություն: Այցի հետ կապված ծախսերը հոգացել է հրավիրող կողմը:

«Գարդենիա» ընկերության նախագահ Նիկոլաս Աբու Ֆասալ

ՀՀ Տավուշի մարզի գյուղատնտեսական, զբոսաշրջային հնարավորությունների և ներուժի ներկայացման ու տնտեսության տարբեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության, ինչպես նաև գործարար կապերի զարգացման նպատակով:

Կայացան հանդիպումներ գյուղատնտեսության, տարածքային կառավարման և բնական ռեսուրսների նախարարության տնօրեն պարոն Զադի Մոհաննայի, արդյունաբերության նախարարության գլխավոր տնօրեն պարոն Դենի Գեդեոնի ու էկոնոմիկայի և առևտրի նախարարության գլխավոր տնօրեն տիկին Ալիա Աբասի հետ, որոնց ընթացքում ներկայացվեցին Հայաստանի և մասնավորապես Տավուշի մարզի զարգացման հիմնական հեռանկարները, ներդրումային միջավայրը, առանձնահատկություններն ու առավելությունները, ինչպես նաև քննարկվեցին համապատասխան ոլորտներում համագործակցության հնարավորությունները:

Արդյունքում վերջիններիս հետ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին տեղեկատվության փոխադարձ փոխանակման վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվեց հրավեր՝ լիբանանյան պատվիրակության հետ մասնակցելու հունիսի 22-23-ին Դիլիջանում կայանալիք բիզնես ֆորումին:

Կայացավ այցելություն Լիբանանի արդյունաբերական մայրաքաղաք Զահլե, որը Բեքքա նահանգի կենտրոնն է: Տեղի ունեցավ հանդիպում Բեքքայի նահանգապետ պարոն Քամալ Աբու Ջաուդի հետ: Նահանգապետին ներկայացվեցին Տավուշի տնտեսական հնարավորությունները, ներդրումային հետաքրքրությունն ու համագործակցության հեռանկարները: Քննարկվեցին տարածաշրջանային համագործակցության բարենպաստ պայմանները:

Արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ պարոն նահանգապետը գլխավորի Բեքքայի բիզնեսմենների (ներդրողների) այցելությունը հունիսի 22-23-ին Դիլիջանում կայանալիք բիզնես ֆորումին, որը նա սիրով ընդունեց:

Հանդիպմանը մասնակցել է նաև Լիբանանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Վահագն Աթաբեկյանը:

Հաջորդիվ կայացավ հանդիպում-քննարկումներ տեղի շուրջ 50 խոշոր գործարարների, մասնավորապես՝ Զահլեյի արդյունաբերության և գյուղատնտեսության առևտրի պալատի, Լիբանանի արդյունաբերության ասոցիացիայի ներկայացուցիչների, արդյունաբերական, գյուղատնտեսական և գյուղվերամշակման ձեռնարկությունների ղեկավարների հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև Բեքքայի նահանգապետը:

Արդյունքում տասից ավելի գործարարներ հետաքրքրություն հայտնեցին մասնակցելու 22-23-ին Դիլիջանում կայանալիք բիզնես ֆորումին:

Տեղի ունեցան այցելություններ մի քանի ձեռնարկություններ, մասնավորապես՝ իրենց արտադրանքը 30 և ավելի երկրներ արտահանող ջրերի, հյութերի և պլաստիկի խոշոր գործարաններ: Այցի ընթացքում հայկական պատվիրակությունը ծանոթացավ գործարանների աշխատանքին, հնարավորություններին ու շուկաներին, ինչպես նաև քննարկվեցին Տավուշում առկա հնարավորությունները:

Նույն օրը տեղի ունեցավ այցելելություն հայկական Անճար գյուղ և հանդիպում համայնքապետ պարոն Վարդգես Կոշյանի հետ, որի ընթացքում քննարկվեցին գյուղի հետ համագործակցության հնարավորությունները, մասնավորապես՝ Տավուշում նոր մշակաբույսերի հետ կապված իրենց ունեցած փորձառության կիրառման հնարավորությունները, կրթամշակութային համագործակցության հնարավորությունները:

Տեղի ունեցավ հանդիպում Հայ Առաքելական եկեղեցու Կիլիկիայի թեմի առաջնորդ Արամ Առաջին կաթողիկոսի հետ: Հանդիպմանը ներկա էր նաև Լիբանանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Վահագն Աթաբեկյանը: Քննարկվեց Հայատանում ընթացող գործընթացներին լիբանանահայ և, ընդհանրապես, սփյուռքահայ համայնքների առավել ակտիվ մասնակցության հեռանկարները:

Արդյունքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ, փոխադարձ կապ պաշտպանել հատկապես հայապահպան և պետականաշեն ծրագրերում առավելագույն մասնակցության նպատակով, հատկապես դեպի Հայաստան սփյուռքահայ շարժման խթանման տեսանկյունից:

Վեհափառ Հայրապետը ցանկություն հայտնեց առաջիկա առիթին այցելել Տավուշ:

Վերջում հանդիպում տեղի ունեցավ Լիբանանի տուրիզմի նախարար պարոն Ավետիս Կիտանյանի հետ: Նախարարին ներկայացվեց Տավուշի տուրիստական ներուժը, զարգացման յուրահատկություններն ու հնարավորությունները:

Արդյունքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին, որ պարոն նախարարը հավանաբար կմասնակցի հունիսի 22-23-ին Դիլիջանում կայանալիք բիզնես ֆորումին, իսկ հոկտեմբեր ամսին՝ Տավուշում կազմակերպելիք տուրիստական համաժողովին՝ առնվազն համաշխարհային 50 տուրիստական կազմակերպությունների մասնակցությամբ:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՉՈԲԱՆՅԱՆ